

ուսուցանողը, խօսողը: Այլ մա՛նաւանդ յեղափոխականը, որուն ընդարձակ է սահմանը ձեր ենթադրածէն աւելի: Խորապէս սրտառուչ: Ուսանող, ուսուցիչ, գրող, հողագործ, բժիշկ, ճարտարապետ, մեծ մասով անցած երկրորդական կրթութեան տիսիփլիւնէն, բայց բոլորն ալ այցուած՝ իրենց ընդերքէն, դժուարած իրենց ջիղերուն կեդրոններէն, բզկտուած իրենց «աղիքներէն», դէպի տառապանքը տաճկահայ եղբայրներուն: Այս խաչակրութիւնը յուզիչ էր, որքան դժնդակ, անձէ անձ, համաձայն զգայնութեանց հակազդեցութիւններուն: Այդ սողոց ամէն մէկուն մէջ, մարդկային պատահար մը կրնաս ընդունիլ, այսօր, երբեմն ահաւոր գեղեցկութեամբ, որ կը շլացնէ քու դատելու գործարանները, երբ կը գտնես ինքզինքդ անոր դէմ, տարիներով փողոց պառկած պատանի, բայց չես գիտեր ո՞ր հրաշքին սլաքովը ինքզինքը արձակած դէպի ողջակէզը իր ժողովուրդին, իր միտքը բաց ընելով իր ցեղին գերագոյն խորհուրդին...: Հոգեբանական տրամա՛, որ գիրքի բառ մըն է դժբախտաբար սա տողերուն վրայ, քանի որ արարքը, ինքն իր մէջ, կը յորդի բոլոր գիրքերէն, որոնք շուքեր են շատ յաճախ, երբ կը բռնուին կեանքին դիմաց: Հիմա նորութիւն՝ այդ սողաքը ո՛չ միայն նախատել, տարիներով գիրենք ծաղրելէ ետք, այլեւ պատասխանատու նկատել մեր աղէտներուն: Հիմա, Սփիւռքը իր իմաստութիւնը փաստարկելու պատրուակ կ'որոնէ ու կը գտնէ մեր աղէտները հասկնալու իր ապարժան իմաստասիրութիւնը վերածելով դաւանանքի: Որքան շատ են իմ ըսելիքները այդ գետնին վրայ: Կ'անցնիմ:

Մաթիկին ողիսականը, մինչեւ սահմանագլուխ: Երկար է անիկա: Ու քիչ մը մութ, թերեւս շուքերուն պատճառով, որոնք մեր ամէնէն անանձն, վսեմ որոշումներուն, արարքներուն կը հսկեն, անողոք ու անմերժելի: Մաթիկ Մելիքխանեանց համառօտութեան պաշտպան փաստաբան մըն էր հո՛ն՝ ուր կեանքին անհրաժեշտ ազդմունքները կու գային առաջին փլանի: Ու երկայնու-